

Հայտնի է, որ Պարսամյանից շատ առաջ այդ վավերագրերին ծանօթ են եղել և իրենց աշխատութիւններում դրանք օգտագործել են նաև ուրիշներ: Այսպես, օրինակ, այդ փաստաթղթերի մի մասը հիշատակված է դեռևս 1833 թ. (տե՛ս „Собрание актов, относящихся к истории армянского народа“, Москва, 1833, т. I, стр. 367, 368, 369, 372 և այլն): Ավելի ուշ, պատմական գիտութիւնների զոկաւո Պ. Տ. Հարութունյանը, 1954 թ. Մոսկվայում հրատարակված իր „Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века“ ծաղալուն ուսումնասիրության 187—188 էջերում նույնպես հաստիկ անդադարձել է առաւելու գործած փաստաթղթերին, նշելով դրանց արխիվային աղբյուրը (նկատենք, որ Պ. Տ. Հարութունյանի աշխատության մէջ հիշված է Վ. Պարսամյանի կազմած ժողովածուում գնահատված փաստաթղթերը (աղծված են միեւնոյն աղբյուրից):

Զարմանում ենք, քե ինչպես է, որ Վ. Պարսամյանը «մոռացել է» հիշատակել հանգույցայ պատմաբանի անունը:

Ամփոփենք. «Անհնայերի մասնակցութիւնը Դավիթ-Քեկի ապստամբութեանը» փաստաթղթերի ժողովածուն պատրաստված ու հրատարակված է անփութ յո գիտական ցածր մակարդակով: Առաջարանի քեզերը, հարցադրումներն ու մեկնաբանութիւններն հակասում են յոստունիին և աղբյուրն են հեղինակի կանխակալ կարծիքների ու ցանկութիւնների: Դիտական աշխատանքի նման սեր, հասկանալի է, որ պետք է մերժվի ու դատապարտվի:

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔ «ԷԼԷՄԷՆՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎԻԹ-ՔԵԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆԸ» ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

Դիժար չէ, իրոք, համոզվել, որ այս դրքի խոստումնայից վերնագիրը աղերս չուի իր բովանդակության հետ: Այս չի կարող որևէ չափով արդարացնել Դավիթ-Քեկի ապստամբութեան մասին «ճոր նյութեր» փետող հետազոտողի սպասումը: Ակներև է, որ վավերագրերի այս ժողովածուն ուկկամելու կարիքը աւելի գուրեղ է եղել կազմողի մոտ, քան պատմագիտութեանը նպաստելու պահանջը:

Փաստ է, որ սովետահայ հետազոտողներից ոմանց այդ վավերագրերը ծանօթ են եղել պրոֆ. Վ. Պարսամյանի և քանի մի ուրիշների «հայտնաբերումներից» շատ առաջ, և երբ այդ նյութերը մինչև հիմա էին արծանանում առանձին հրապարակման, այդ միայն այն պատճառով, որ չի եղել ան համոզմունքը, քե դրանք «ճոր լույս են սփռում Դավիթ-Քեկի ապստամբութեան» նամ «XVIII դարի հայ ազատագրական շարժման մոյր էջերի վրա» (տե՛ս ժողովածուի առաջարանը, էջ 24):

Դիժար է հասկանալ, քե ինչու առանց խելամուտ լինելու վավերագրերի բովանդակութեանն ու դրանց գիտական մշակման որակին, Խեւանի համալսարանը շտապել է լույս րծայել այս ժողովածուն՝ հարկ համարելով գրքի հայերեն բնագրին կցելու ոչ միայն նրա ոուսերեն քարգմանութիւնը, այլև նույն իսկ վավերագրերի դիժարնրնրնրի նմանահանութիւնները և րոդւմին՝ ժողովածուի կազմողին անհարկի կերպով հատկացնելով... հեղինակի իրավունք: Պիտի ենք քաղել, ինարկե, որ համալսարանի հրատարակչական հարգարծան խորհուրդը օծանդակել է մեծամասն տոյ հրատարակութեանը՝ գոհ զառնալով խալուսիկ այն տպագրութեանը, քե գործունի Դավիթ-Քեկի անվան հետ կապված մինչ այժմ անհայտ նյութերի հետ, որոնք աղբյուր են ծառայելու ոչ միայն XVIII դարի հայ ազատագրական շարժումների, այլև «հայ-ոուսական, հայ-ուկրաինական և հայ-լեհական հարաբերութիւնների պատմութեան համար»: Թյուրիմացարար աղպես էլ հենց հայտարարված է գրքի ապագրութեան հրատարակչութեան հանձնարարականում:

Ինչպես հիմա ակներև է պրոֆ. Վ. Պարսամյանի «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբարագրութեան հասցեագրած փոքր-ինչ հապաղած խոստովանութիւնից իսկ, ժողովածուի նյութերը ստեղծվում են ոչ քե սլարսիկների ու րուրների դեմ Դավիթ-Քեկի ապստամբութեան, այլ 1728 թ. Անաստանից Անդրկովկաս վերադարծած հայաստանցի փախստականների՝ Աղեախների դիմադրական շարժման մէջ ունեցած մասնակցութեանը: Հրատարակված վավերագրերից ակներև է, որ ներկա դեպքում հարցը, հաճառորեն, դիմադրական այն շարժման մասին է, որ դեկադարում էր Արախան յուրբաշին (տե՛ս ժողովածուի 142-րդ էջում): 1729—1731 թթ. մեզ հայտնի ուղղակներով, այդ յուրբաշու՝ Արախան սպարապետի, կամ ինչպես նրան անվանում էին Անդր-

կովկասի օսմանյան օկուպանտները, «զյավուր Արահամի» գլխավորած Գյուլիստանի Ողնախի ղեմադրական պայքարը այնպիսի սառսափ էր ազդել բուրժուական, որ հառկ եղավ նույնիսկ մի Լանի օտրամասեր կենտրոնացնել Անդրկովկասում՝ «զյավուրի» գլխավորած ղեմադրությունը չախչախելու նամար:

Այս միայն «ենո» է, այլև հետախոնական Լեհաստանից Լաւարսուլ ժամանած հայկական ջոկատի մասնակցությունը Սղնախների պաշտպանության գործում: Ցավային այն է միայն, որ մուղովածուն կազմողի ուշադրությունից խուսափել է նոր և հետախոնական այդ փաստը: Այդ է հենց պատճառը, որ XVIII դարի հայ ազոտապահական շարժման այս հիւրավոր «մուր էր» լուսարանելու փոխարեն նա տարվել է Դավիթ-Քեկի հնչեղ անվան ապարդյուն բմբակահարությամբ:

Վ. Պարսամյանի նամակի առթիվ Հ. Խաչատրյանի՝ «Հանդես»-ի խմբագրությանը ներկայացրած բացատրությունները հիմնականում ճիշտ են: Հիմնականում, բայց ոչ լիարժեք ամենայնի հաշտությանը ըստ երևույթին մերժում է ժողովածուն՝ չնկատելով նրա «ոացիոնալ կուրզը»: Երա կարծիքով Լեհաստանից ժամանած Գրիգոր Ստեփանյանի ջոկատի անդամները Լեհաստանից Դաւարաղ են մեկնել միայն հարազատներին տեսնելու ցանկությունից մղված: Այդ դուրսը ապացուցելու համար նա հենվում է N 26 փաստաթղթի վրա, ենթադրելով դրանով ժխտել Պարսամյանի այն միտքը, որ նրանք նպատակ ունեին օգնության գնալու Սղնախներին: Սակայն Սղնախներին օգնության գնալու մասին խոսվում է մի շարք վավերագրերում, սկսած հենց N 1 վավերագրից: Ուր դեռ 1736 թ. Գր. Ստեփանյանի ջոկատը մասնակցել էր Սղնախների պաշտպանությանը՝ վկայում են այն դիմումները, որ նրա հետ մեկտեղ ստորագրում են ռուսական արեւմտիկ Սղնախների մյուս յուզրաշիններ (վավերագիր N 32):

Ի դեպ՝ չի կարելի անվերապահորեն հաճատ բնծայել գեներալ Ռումյանցևի բոլոր գրածներին: Գեներալը ամբաստանություններ էր գրում ոչ միայն Լեհաստանից ժամանած հայերի, այլև Սղնախների մասին առհասարակ: Նա ձեռնարկ էր համարում ու միայն դրանց, այլև Սղնախների հայ մարտիկներին առհասարակ, այդ թվում նույնիսկ Սղնախների շարժումը չեղարկող Ավան կամ Թաթևան յուզրաշինի պես գործիչներին: Հանդիսանալով 1724 թվականին Կ. Պոլսում կնքված պայմանագրի ջերմ պաշտպանն ու կենսագործողը, Ռումյանցևը պահանջում էր Սղնախների կապիտուլյացումը, ուստի և անվերապահորեն դատապարտում ու ըստ ամենայնի վարկարկելով Սղնախների ղեկավարներին ու գործակիցներին: Վկայակոչելով Ռումյանցևին՝ Հ. Խաչատրյանը պետք է որ հրա մասին աներ առավելապես հետևյալը:

ԱՇԹՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.— Խմբագրությունը համամիտ է այն բնդհանուր գնահատականին, որ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը և բնկ. Համո Խաչատրյանը տալիս են «Լեհաստանի մասնակցությունը Դավիթ-Քեկի ապստամբությանը» ժողովածուին: